



ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏՅՈՒՏԱԿԱՆ

Թ. ՅԱՐԻ 1895

Տարեկան 10 ֆր. ոսկի — 4 յր.:
 Վեցամսեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 յր. 50 կ.:
 Մեկ թիւ կ'արժէ 1 ֆր. — 50 կոպ.:

Թիի 5, Ս Ա Յ Ի Ս

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Մ. ԹՈՒՆԹԵՑԻՈՅ ՈՂԲԻ ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ
 ԱԾԽԱՐՀԻՆ ՈՒՐԱԽԱՆԸ



(Չարանահանութիւն
 Ի- ԺԵԼ)

Միաս սարկաւագ՝ Ստեփանն Վոյվոտային Հայերն հալածելու պատճառն իւր բարեմիտ ծանօթութիւններովը կրճակաւ հիմանց վրայ յենելով՝ այսպէս կը մեկնէ. « Հայերը, կըսէ, ծանր մեղաց մէջ գլորած էին, Աստուծոյ պատուիրաններն այլ եւս չէին պահեր, անոր համար ալ Աստուած՝ ի պատիժ զիրենք Ստեփանն Վոյվոտային ձեռքը մատնեց:

Այս մեկնութենէս վերջը Միաս սարկաւագ մանրամասն կը նկարագրէ այն բռնութիւնը՝ զոր ուրիշ Ռուսմանացի ու Հայ ժամանակագիրք ալ կը պատմեն՝ այլ առանց իրը պարզելու՝ ըսելով պարզապէս թէ՛ Մոլտաւացի իշխանը նոյնը բանեցուցած ըլլայ՝ որպէս զի իրենց

հաւատքն ուրանալու ստիպէ զՀայս: Զանազան դառն տանջանքներով կը շարաբէր Հայերը. զ.օր. թեւերը կտրել, սրունքները ջախջախել, աչուները բրել, կենդանւոյն այրել տալով, եւն. եւ ասոնցմով յոյն դաւանանքին գլխաւորութիւնը ճանչնալ տալ կ'ուզէր անոնց, եւ հաճութեամբ ու սիրով իսկ այս տանջանաց գործադրութիւնը կը դիտէր՝ անձամբ Սուլթանի բերդին միջնաբակին մէջ ներկայ գտնուելով ու իւր հրամանաց կատարման վրայ խստիւ հսկելով: Բայց իրենց հարց հաւատքին մէջ անսասան մնացողներուն թիւը մեծ էր եւ շատ ժամանակ պէտք էր ասոնց առանձին առանձին տանջանքներ սահմանելու: Ինչդիրը շուտով լմնցրնելու համար իշխանը Սուլթանի առուին եզերքը փայտեայ՝ յարդով լցնել անակներ շինել տուաւ, որոնք պզտիկ դռնակ մ'ունէին, ասոնց մէջ Հայերը դիզել տալով՝ կրակ տալ կը հրամայէր, որպէս զի ըստ կարելոյն շատ անհասարկ այրի:

Մինչդեռ Հայք՝ իբրեւ հիւրերն այսպէս կը տանջուէին ու կոտորուէին՝ միւս կողմանէ իրենց այլեւայլ քաղաքաց մէջ ունեցած եկեղեցիքն ալ կը կործանուէին ու կողոպտուէին, եւ իշխանէն ղեկուած որեւոր քահանայք կը սրբէին օրհնած ջրով այն Հայոց տները՝ որոնք այս ահագին տանջանաց մէջ յունական դաւանանքն ընդգրկած էին:

Չարաբարանաց սաստկութենէն ուրացողներուն թուոյն մէջ կար նաեւ քահանայ մը որուն աղէտից վրայ Միաս իւր ողբերգութեան մէջ